



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

372.91
4-98

Ն. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ

ԳՅՈՒՂՈՒՄ

ՄՈՍԿՎԱ 1925

0120-10

370
2053-40



372.2
4-98

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ
ԳՅՈՒՂՈՒՄ

1004
15311

ՄՈՍԿՎԱ

1925

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍ. Ա. Խ. Հ. ԼՈՒԳՈՎՈՂԿՈՄԱՏԻՆ ԿԻՑ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐ. ԲՅՈՒՐՈՅԻ

24 MAY 2013

30.8.20

Н. КРУПСКАЯ

ДЕТСКИЙ САД В ДЕРЕВНЕ

Издание Армянск. Ц. Б.
при Совнацмене НКП.

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ գյուղական տղաբնակությունը քաղաքային աղգաբնակությունից 5 անգամ ավելի եւ 1923 թվի վիճակագրական տվյալների համաձայն ամբողջ Միության մեջ ապրում են 133 միլ. բնակիչ, դրանից գյուղերում—111 միլիոն, իսկ քաղաքներում—22 միլիոն։ Այս թվերը մի անգամ ևս ապացուցում են, վոր վոչ մի բողեք չպետք եւ մոռանալ գյուղի խոշոր դերը մեր յերկրի ամբողջ կյանքում, և վոր ՍԽՀՄ ապագան կախված եւ նրանից, թե ինչ ճանապարհով կնթանա գյուղը։ Ուստի և գյուղում տարվող աշխատանքին պետք եւ հսկայական տեղ տրվի։ Կուլտուրական աշխատանքի բոլոր տեսակները պետք եւ հարմարեցվին գյուղին, անհրաժեշտ ուշադրություն դարձնելով նրա վրա։ Խնդիրը այսպես եւ գրվում նաև նախադպրոցական կրթության նկատմամբ։

Գյուղում աշխատանք տանելու համար ամենից առաջ պետք է պարզել, թե ինչ ե իրենից ներկայացնում ժամանակակից գյուղը. Մի ժամանակ նարոդնիկները իդեալականացնում եյին գյուղը, յերեվակայում եյին, վոր գյուղացիք բնածին սոցիալիստներ են, վոր նրանց հոգեբանությունը կոլեկտիվիստական ե, ուստի և ոռու գյուղի համար թոփչքը գեպի սոցիալիզմի թագավորությունը չափազանց հեշտ ե:

Այդյերեվակայություններին վաղուց վերջ ե տրված. ճորտատիրական իրավունքի ժամանակաշրջանում գյուղը իրենից ներկայացնում եր իսկապես վոր մի միացյալ ֆըրոնտ հանդեպ կալվածատերի, և նարոդնիկների (վորոնք մեծ մասամբ կալվածատիրական միջավայրի ծնունդ եյին) աչքին բնականաբար զարնում եր ամենից առաջ այդ միացումը: Լեվ Տոլստոյը, վորը այնքան սրատես եր և դիտող, «Կալվածատերի առավոտը» իր զարմանալի պատմվածքի մեջ տվել ե ճորտատիրական գյուղի պատկերը:

Զքավոր գյուղացին, վորի խրճիթը փուլ ե գալիս և սպառնում ե նրան տակով անել, չի ցանկանում ուրիշներից փայտեղեն խնդրել, ուրիշների առաջ խոնարվել, այլ գերազասում ե խորտակվել,—այդ ամենը ցույց ե տալիս, թե այն ժամանակ ինչ եր ներկայացնում իրենից գյուղը: Իսկ այդ ժամանականից մինչև որս շատ ջուրե հոսել: Հետզհետե, յերբ գյուղացին ավելի շատ սկսեց արտադրել վոչ միայն իր սեփական գործածություն, այլ և շուկայում վաճառելու համար,—ավելի ու ավելի պարզ ցուցադրվեց գյուղացու մանր սեփականատիրական դեմքը:

Բանվորները գործարանում աշխատում են միասին մի ընդհանուր ծրագրով, աշխատանքը և արտադրության պայմանները, ինչպես և շահերի նույնությունը նրանց մեջ կրթում ե հասարակական ինստինկտ և զգացումներ, հասարակական ունակություններ, ստեղծում կոլեկտիվիստական հոգեբանություն: Մանր արտադրողը, ընդհակառակը,

աշխատում ե մենակ, նա պետք չի գգում
կազմակերպության, նա անվատահությամբ
և նայում ամենքի վրա. Յեթե բանվորի
հոգեբանությունը կարելի ե արտահայտել
«բոլորը մեկի համար, մեկը բոլորի համար»
լողունգով,—մանը արտադրողի հոգեբանու-
թյունը արտահայտվում ե այսպես՝ «ա-
մեն մարդ իր համար, միայն աստված ե
բոլորի համար»:

Պատմական պայմանները, ճորտատիրա-
կան իրավունքը և հետո կալվածատերերի
տնտեսական ու քաղաքական բռնությունը
ուսւագույն դարձրել են նաև տգետ,
սնոտիապաշտ, անգրագետ:

Գյուղը—այդ մի վայր ե մանը արտա-
դրողների, վորոնք միասին են ապրում, սա-
կայն վոչնչով միմիանց հետ կապված չեն:

Անսահման հնարավորությունների և ան-
գրագետների, միմիանցից անջատ ապրող
բնակիչների—մանը արտադրողների յերկիրը
—սոցիալիստական յերկիր չե:

Սոցիալիզմը կառուցվում ե կոլեկտիվիզ-

մի վրա, բոլոր ուժերի միության վրա՝
ծրագրային աշխատանք տանելու, ընդհա-
նուր միասնական նպատակների համակա-
համար:

Իսկ ի՞նչ են ասում կոմունիստները:
Ի՞նչ պետք ե անել:

Կոմունիստները ասում են. «Այո, մենք
գիտենք, թե իրենից ինչ ե ներկայացնում
ժամանակակից գյուղը, բայց մենք նաև
գիտենք, վոր Հոկտեմբերյան Հեղափոխու-
թյունը գյուղացիությանը ամուր միացրեց
բանվոր դասակարգի հետ, և բանվոր դա-
սակարգը գործ կը դնի իր բոլոր ուժերը,
իր ամբողջ իշխանությունը, վորպեսզի հետ-
զի հետեւ, յերկար ու համառ աշխատանքով,
գյուղացիներին դարձնի գրագետ, հասկա-
ցող, վորպեսզի ստեղծի այնպիսի պայման-
ներ, վորոնք գյուղացիներին մղեն դեպի
միություն. բանվորները կուժեղացնեն ի-
րենց դաշինքը գյուղացիության հետ, քա-
ղաքականապես նրանց կը դեկավարեն, միշտ
կաշխատեն իրենց իդեյական ազդեցության

տակ պահել նրանց, —և այդպիսով հասած
կլինեն առաջադրած նպատակին:

Վորպեսզի գյուղացիները սովորեն մի-
միանց հետ միանալ, պետք ե նրանց մեջ
ամենալայն կերպով զարգացնենք կոռպե-
րացիայի ամեն տեսակները: Կոռպերացիան
պետք ե այնպես դնել, վոր գյուղացին գը-
նա նրա մեջ մանի իր շահից դրդված: Յեկ
այն ժամանակ մանը տնտեսությունների
կամավոր միացման գործը արագ քայլե-
րով առաջ կը գնա: Կոռպերացիան արագ
կապ ե հաստատում պետական խոշոր ար-
դյունաբերության և գյուղական տնտեսու-
թյան միջև և տնտեսական բազա ե ստեղ-
ծում բանվորների ու գյուղացիների զոդ-
ման համար:

Քտղաքական կազմակերպության ըրջա-
նում ևս ճանապարհը պարզ ե:

Մեր սովետական սահմանադրության մեջ
քաղաքական դաշինքը բանվոր դասակարգի և
գյուղացիության միջև արգե՞ն կնքված ե:

Մնում ե միայն խորհուրդների միջոցով
խորացնել այդ միությունը:

Վերջապես, յերկրորդ հարցը, վոր պետք ե
ոգնի գյուղացուն կոռպերացիայի խնդրում,
բանվորի հետ միասին քաղաքական և միաս-
նական կուղմակերպության մեջ լինելու
գործում, —այդ՝ զրագիտությամբ զինվելն
ե, զրքից, նրան անհրաժեշտ գիտելիքներից
ոգտվելու կարողությունն ե: Պետք ե գիտա-
կից դարձնել նրան, ոգնել նրան հասկանալու
կոռպերացիան, ըմբռնելու բանվոր դասա-
կարգի հետ իր ունեցած քաղաքական դա-
շինքի նշանակությունը: Անհրաժեշտ ե նաև
վարակել գյուղացուն բանվոր դասակարգի
կողեկտիվիստական տրամադրություններով:

Իր վերջին հոգվածում կոռպերացիայի
մասին վաղիմիր իլիչը գրել ե, վոր այժմ
մեր առաջ հսկայական կարելորություն ու-
նեցող մի հարց ե զրված, այդ՝ կուլտուրա-
կան աշխատանքն ե գյուղացիության հա-
մար. «կոռպերացիայի լրիվ կիրառման դեպ-
քում մենք արդեն յերկու վոտքով կանգնած
կլինենք սոցիալիստական հողի վրա», —գրել
ե նա: Բայց լրիվ կոռպերացիայի կիրառ-

ման այդ պայմանը իր մեջ պարունակում
ե գյուղացիության (հատկապես գյուղացի-
ության, վորպես հսկայական մի մասսայի)
մեծ կուլտուրականություն, կռոպերացիայի
այդ լրիվ կիրառումը անհնարին ե առանց
կուլտուրական մեծ հեղափոխության:

Կուլտուրական աշխատանքը գյուղում
պետք ե տարվի տարբեր ուղիներով, այդ
աշխատանքի բոլոր տեսակների կիրառումով:
Նա պետք ե տարվի նաև մանկական նա-
խադպրոցական հիմնարկների միջոցով:

Յերբ բոլոր կուլտաշխատավորները հետզ-
հետեւ ավելի և ավելի խորը կը զգան այդ
աշխատանքին մասնակցելու անհրաժեշտու-
թյունը, միթե նախադպրոցական հիմնարկ-
ների աշխատավորները մի կողմ կը քաշվեն
և չեն մասնակցի շարժմանը:

Ի՞նչ կարող ե տալ մանկապարտեզը գյու-
ղին:

Նախ կանգ առնենք այն հարցի վրա, թե
ի՞նչ կարող ե տալ մանկապարտեզը գյու-
ղացի յերեխային: Ամենից առաջ, ման-

կապարտեզը շատ բան կարող ե տալ՝ յե-
րեխանների առողջապահության իմաստով:
Չի կարելի անտարբեր նայել այդ հարցին:

Առաջվա տվյալներով, Ռուսաստանում
մինչև հինգ տարեկան հասակ ունեցող յե-
րեխանների կեսը մեռնում եր: Կարծում
եմ, վոր այժմ գրությունը չի բարվոքված,
այլ ընդհակառակը, ավելի վատթարացել ե,
և մասնավորապես գյուղում:

Մանկապարտեզը գյուղում պետք ե ա-
մեն կերպ հոգա գյուղացի յերեխանների ա-
ռողջության մասին, նրանց մեջ զարգացնե-
լով առողջապահական սովորություններ, հոգ
տանելով նրանց հագուստի, նրանց սնունդի,
նրանց կազդուման մասին:

Մյուս խնդիրը—յերեխաններին տալ ու-
նակություններ, թե ինչպես կարելի ե ապ-
րել ու աշխատել միասին:

Յես տեսել եմ մանկատներ Շվեյցարիա-
յում և Ֆրանսիայում: Այնտեղ սովորեց-
նում են միայն լսել և աշխատել առանձին: Անհրաժեշտ ե մանկապարտեզի. աշխատանքը

այնպես կազմակերպել, վոր յերեխաները
սկզբում փոքր խմբերում և հետդիետե
վելի մեծ խմբերում միշտ կատարեն ընդ-
հանուր և կազմակերպչական աշխատանք:

Տնակ շինիր, պարտեղ շինիր, բայց վո՛չ մե-
նակ, այլ յերկուսով, յերեքով, չորսով: Խաղա
վո՛չ թե մենակ, այլ միասին, սովորիր վոչ թե
մենակ, այլ ուրիշների հետ միասին:

Մոնտեսորիի սիստեմը նրանով ե վատ, վոր
նա անջատում ե յերեխաներին: Նատ բան
կարող ե տալ խաղը՝ միասին գործելու սո-
վորության իմաստով: Այստեղ պետք ե խա-
ղերի խիստ ընտրություն անել, պետք ե
կուլտուրացնել խաղերը, վորոնք զորացնե-
յին օբոլորը մեկի համար, մեկը բոլորի հա-
մար» որենքի կիրառման կարողությունը,
վորոնք սովորեցնեյին գործել միասին, նկա-
տի ունենալ ընդհանուր նպատակներ և ընդ-
հանուր շահեր:

Այն խաղերը, վորոնք տեղի յեն ունե-
նում կամանդայի ուժով, առանց ներքին
գրավչության, — շատ քիչ արժեք ունեն:

Յերրորդ խնդիրն ե — զարգացնել դիտո-
ղականությունը, տեսմելու կարողությունը,
ստուգել իրենց դիտողությունները ուրիշնե-
րի դիտողություններով, դրանց ճիշտ պատ-
կերացնել, յերեխաներին սովորեցնել գտնել
յերեվույթների պատճառները: Այս բոլորը
յերեխաներին մատերիալիստական ավելի
լավ ուղղություն կը տա, քան վորեւ այլ
բան:

Յեվ վերջապես, չորրորդ խնդիրը — այդ
այն ե, վոր պետք ե յերեխաներին վորքան
կարելի ե շատ տալ կողեկտիվիստական ապ-
րումներ: Դրավիչ հետաքրքիր պատմվածք
միասին լսելը, խմբական յերգը, մամնուկ-
ցությունը տոնակատարություններին, ընդ-
հանուր ուրախությունը և վիշտը չափա-
գանց մոտեցնում են յերեխաներին:

Այս բոլորի համար պետք չեն մեծ մի-
ջոցներ, այդ բոլորը շատ լավ կարող ե ա-
նել ամենաաղքատ, ամենահասարակ ման-
կապարտեզը՝ լավ հրահանգված կոմսոմոլ-
կայի գլխավորությամբ:

Մանկության տպավորությունների հետքերը պահպանվում են մարդու ամբողջ կյանքի ընթացքում։ Մանկական ապրումները ազդում են նրա հետագա կյանքի վրա, նրա ապագա ամբողջ աշխատանքի վրա, թեյեվ հաճախ նրանք պահպանված են լինում անգիտակից մտապատկերների շրջանում։ Մարդ կարող է մոռանալ դրանց, բայց դրանք, հակառակ նրա կամքի, հաճախ վորոշում են նրա արարքները։

Այսպես ուրեմն, անհրաժեշտ է գյուղական նախադպրոցական հասակ ունեցող յերեխաներին տալ ապրումների մի պաշար, վորոնք կարողանային նրան ոգնել ապագայում դառնալ ակտիվ աշխատողներ՝ կոռպերացիայի խնդրում, մանր սննդեսությունների միացման գործում, գյուղը գեղի կոլեկտիվիստականության ձանապարհը մըղելու գործում։ Սա՛ ե, վոր մանկապարտեղը տալ կարող է գյուղացի յերեխաներին։

Բայց նա կարող է շատ բան տալ նայել չափահաս ազգաբնակությանը։ Յեթե

գյուղացին մինչև վոսկորների ծուծը լցված ե ինդիվիդուալիստական հոգեբանությամբ, ապա ուրեմն այդ ավելի մեծ չափով կարելի է ասել ամուսնացած գեղջկուհու մասին, վորի ամբողջ շահերը պարփակված են սեփական տնտեսության նեղ շրջանակում։ Ամուսնացած գեղջկուհիները շատ ավելի խավար են, հասարակականորեն շատ ավելի ոտար ելեմենտ են իրենցից ներկայացնում։ Կան, ինարկե, բացառություններ, բայց այսպես ե ընդհանուր առմամբ։ Այսպես չպետք ե շարունակվի. գեղջկուհուն պետք է դուրս բերել իր պարփակված դրությունից և մասնակից անել տալ հասարակական աշխատանքին, յեթե մենք ցանկանում ենք նրան տանել սոցիալիզմի ճանապարհով։

Գյուղական մանկապարտեղը հնարավորություն ե տալիս մոտենալ սեփական շահերով տարված գեղջկուհուն և նրան հետաքրքրել հասարակական շահերով։ Մանկապարտիզային աշխատավորի նպատակը պետք է լինի—գործի կանչել և կազմակերպել գեղջկուհիներին

մանկապարտեզի շուրջը աշխատանք տանելու, հնարավորություն տալ գեղջկուհուն զգալու, վոր ինքը հասարակական աշխատող է։ Այս դժվար աշխատանք է, վոր պահանջում է մեծ ուշադրություն, մեծ համառություն։ Բայց գեղջկուհուն մասնակից անել տալով մանկապարտիզային աշխատանքներին, մենք նրան նվաճած կլինենք կին բաժնի աշխատանքների համար, հասարակական ավելի պատասխանատու աշխատանքի համար։ Մենք նրան դուրս ենք բերում իր ձանձրալի մեկուսացումից։ Մայր-գեղջկուհու միջոցով մենք կգտնենք ուղիղ ճանապարհ՝ կովելու գյուղական խավարի ու անտարբերության դեմ...»

Մեծ, անհրաժեշտ աշխատանք է այս, վոր կարող ե խանդա վառել մանկապարտիզային աշխատավորներին, նրանց արիություն և եներգիա շնորհել։



3-я Типография Государственного Архива Армении на
Главлит 35317.

ՀՀ Ազգային գրադարան



NL0235252

50. 820

Հանձնվում է տպագրության

«ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ՃԱՆԱԳԱՐՀԻՆ»

(Ժողովածու, մոտ 500 էջ, մեծագիր)

ՊԱՀԱՆՁՆԵՐՆ ՈՒՂՂԵԼ

Москва, Армянск. ЦБ при Совнармени НКП.

Գիր 6 10 կ.